# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

## Հ Ր Ա Մ Ա Ն

«22» հուլիսի 2025 թ. N 118-Լ

### ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ՆԵՐԴԻՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված «Շին-Կոմֆորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի հուլիսի 18-ի դիմումը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով «Շին-Կոմֆորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի «Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի» 3-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-000035) և «Էլեկտրամատակարարում» ենթատեսակի ներդիրի (ՔՊՆ-000035-05) գործողությունը:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

7/22/2025

X

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ